ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԴՈՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԳԱԳԻԿԻ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՒՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.02 Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2016

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МАДОЯН ГУРГЕН ГАГИКОВИЧ

ОРГАНИЗАЦИОННО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПОЛИЦЕЙСКОЙ СЛУЖБЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – "Публичное право- конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление"

Ереван-2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ռ.Հ. Եղյան**

Պաշտոնական ընդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Հ. Երիցյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու **Գ.Ս. Մուղնեցյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. մարտի 18-ին, ժամը 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ա. Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. փետրվարի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարի
պաշտոնակատար, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном универсиете

Научный руководитель кандидат юридических наук, доцент **Р.А. Егян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **А.А Ерицян**

кандидат юридических наук **Г.С. Мугнецян**

Ведущая организация: **Центр Конституционного права РА**

Защита диссертации состоится 18-ого марта 2016 г., в 14^{03} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 16-ого февраля 2016г.

ИО ученого секретарья специализированного совета,
доктор юридических наук, профессор А. Г. Вагаршян

Հետազոտության թեմայի արդիականությունը: Պետության առջև ծառացած խնդիրների լուծումն անհնար է պատկերացնել առանց արդյունավետ պետական կառավարման, որն ուղղակիորեն կախված է պետական իշխանության մարմիններից և դրան համապատասխան ընտրված պետական ծառայության համակարգից: Հայաստանի անկախության հռչակումից հետո, երկրում փոքր ինչ ուշացումով, բայց բավարար հետաքրքրություն առաջացավ պետությանը վերապահված լիազորություններն իրականացնող մարմինների ձևավորման, իրավասության սահմանազատման և դրանցում հանրային ծառայության ինստիտուտի ներդրման շուրջ:

Պետական ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորման գործընթացը որակական նոր հիմքի վրա դրվեց «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ 2001թ. դեկտեմբերի 4-ի օրենքի ընդունմամբ: Օրենքով որոշակիացվեցին այս բնագավառի համար հիմնարար նշանակություն ունեցող մի շարք հասկացություններ՝ ինչպիսիք են հանրային ծառայությունը, պետական ծառայությունը և այլն, ներդրվեց նոր եզրույթների լայն շրջանակ: Դրանով այն կարևոր նշանակություն ձեռք բերեց ոչ միայն քաղաքացիական, այլև պետական ծառայության մյուս՝ այդ թվում ոստիկանությունում ծառայության ընթացքում առաջացող հարաբերությունների կարգավորման համար: Կարճ ժամանակահատվածում ընդունվեցին պետական ծառայության առանձին ոլորտներում առաջացող ծառայողական հարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենքները: Այդ շրջանակում 2002թ. հուլիս 3-ին ընդունվեց և 2003թ. հունվարի 1-ից գործողության մեջ դրվեց «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը:

Հանրային ծառայողական հարաբերությունների կարգավորման համար որոշակիորեն միասնական օրենսդրական հիմք ունենալու անհրաժեշտության գիտակցմամբ էր պայմանավորված «Հանրային ծառայության մասին» ՀՀ 2011թ. մայիսի 26-ի օրենքի ընդունումը: Զարգացած իրավական, ժողովրդավարական պետություններում ընդունված կառուցակարգերին և իրավական կարգավորվածությանը համապատասխան հանրային ծառայության համակարգում պետության իրավապահ գործունեությունն իրականացնելու համար հատուկ մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմինների առանձնացումը, դրանցից յուրաքանչյուրի խնդիրների սահմանումն ու տարանջատումը, գործունեության առանձնահատկություններով պայմանավորված պետական համապատասխան ծառայության ներդրումը բարդ և պատասխանատու գործ է: Դա պայմանավորված է նրանով, որ տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտներում ներկայումս ընթացող բարեփոխումների պայմաններում, անհրաժեշտ էր մշակել ու իրականացնել համալիր իրավական և դրանց համահունչ կազմակերպական միջոցառումներ՝ ուղղված պետական կառավարչական համակարգի

մարմինների գործունեության կատարելագործմանը: Այդ հարցերի լուծումը մեծապես կախված է երկրում իրավական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորմանն ուղղված գործընթացներից: Պետության ոստիկանական գործունեությունը, որպես իրավապահ գործունեության տեսակ և այն իրականացնող պետական ծառայողներն ունեն անհամեմատ կարևոր դեր անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության, իրավակարգի և օրինականության ապահովման բարդ և բազմաբնույթ խնդիրների լուծման գործում:

Ոստիկանությունում ծառայության կազմակերպական և իրավական հիմնախնդիրների բացահայտումը, դրանց հաղթահարման համար տեսականորեն հիմնավորված մոտեցումների առաջարկումը և դրանց գործնական կիրառումը կարևոր նախապայման են ժամանակի մարտահրավերներին դիմակայելու ունակ ոստիկանություն ունենալու համար: Դրանով իսկ դրսևորվում է աշխատանքում քննարկվող թեմայի արդիականությունը:

Այն առավել նշանակալի է դառնում վերջին տարիներին ոստիկանության գործունեության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում: ՀՀ կառավարության «ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի հայեցակարգին հավանություն տալու մասին» 2010 թվականի ապրիլի 1-ի թիվ 345-Ն և «ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2013-2014 թվականների բարեփոխումների ծրագրին հավանություն տալու մասին» 2013 թվականի փետրվարի 7-ի թիվ 109-Ն որոշումների համաձայն, ոստիկանության գործունեության ընթացքում դեռևս առկա խնդիրները լուծելու նպատակով ծրագրի շրջանակներում ոստիկանությունում իրականացվող բարեփոխումները հիմնականում ընդգրկում են կառուցվածքային և կազմակերպական, ոստիկանության աշխատանքային պայմանների բարելավման, ոստիկանությունում ծառայող անձանց սոցիալական և իրավական պաշտպանության, ինչպես նաև հանցագործությունների դեմ պայքարի և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման ուղղությունները:

Կարծում ենք, իրականացվող բարեփոխումների կարևոր ուղղություններից պետք է դառնա նաև քաղաքացիների կողմից ոստիկանությունում ծառայության ընթացքում առաջացող հարաբերությունների իրավական հստակ կարգավորվածության ապահովումը: Նշված հիմնախնդրի լուծումն էական նշանակություն ունի ինչպես ընդհանուր իրավագիտության, այնպես էլ վերջինիս առանձին ճյուղերի, մասնավորապես, սահմանադրական իրավունքի համար, որի առարկան ընդգրկում է նաև պետության և անձի (քաղաքացու) միջև փոխհարաբերությունները: Դրանք ապահովում են նաև այդ ոլորտի պետական մարմինների ու կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը: Հետևաբար, արդիական է համարվում ոստիկանությունում ծառայություն անցնելու վերաբերյալ պետության և քաղաքացիների միջև առաջացող փոխհարա-

բերությունների ուսումնասիրությունը, քանզի վերջինս կապված է ծառայողների ¥ինչպես նաև որոշ դեպքերում նրանց ընտանիքների անդամների¤ մի շարք սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ:

ՀՀ ոստիկանությունում ծառայության ընթացքում առկա կազմակերպական, իրավական հիմնախնդիրների վերհանումը, դրանց ամբողջական ուսումնասիրությունը ¥վերջինիս իրավական կարգավորման առկա բացերի ու հակասությունների պայմաններում¤, լուծման արդյունավետ ուղիների առաջարկումը, կարծում ենք, անհրաժեշտ է իրականացնել՝ այն համադրելով պետական ծառայության այլ տեսակների հետ, միաժամանակ հաշվի առնելով արտասահմանյան երկրների այս բնագավառում ունեցած փորձը: Նշված հանգամանքներով էլ պայմանավորված են հետազոտության թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվում պատշաճ խորությամբ ուսումնասիրել ոստիկանությունում ծառայության՝ որպես գործունեության յուրահատուկ տեսակի, կազմակերպման և իրականացման գործընթացն ու դրան վերաբերող հիմնահարցերը: Այդ համատեքստում վեր են հանվել ոստիկանությունում ծառայության իրավական կարգավորման ընթացքում տեղ գտած հիմնախնդիրները և, հաշվի առնելով առկա մարտահրավերները, ծառայության կազմակերպման վերաբերյալ առկա տեսական մոտեցումները, զարգացման ու կատարելագործման հեռանկարները, ինչպես նաև արտասահմանյան երկրների այս ոլորտում ունեցած փորձը, լուծումներ են առաջարկվել դրանց հաղթահարման համար: Աշխատանքում քննարկվող դրույթների կտրվածքով կատարվում է օրենսդրության վերլուծություն՝ ներպետական և միջազգային նորմերի տեսանկյունից:

Գիտական նորույթի տարրեր են պարունակվում նաև աշխատության եզրակացություններում ու առաջարկություններում, որոնք ունեն ինչպես գիտատեսական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն:

Հետազոտության օբյեկտը ոստիկանությունում ծառայության կազմակերպական, իրավական հիմնախնդիրներն են, որոնց վերհանումը և ուսումնասիրումը կարևոր նախապայման են ոստիկանությունում ծառայողական հարաբերությունների արդյունավետ կարգավորման համար:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է համակողմանի վերլուծել ՀՀ պետական ծառայության համակարգում ոստիկանությունում ծառայության տեղն ու դերը, վեր հանել ծառայության այդ հատուկ տեսակի կարգավորման ընթացքում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև առաջարկել ուղիներ դրանց հաղթահարման համար: Իրավահամեմատական վերլուծության են ենթարկվել Հայաստանի Հանրապետությունում ոստիկանությունում և պետական ծառայության մյուս տեսակ-

ների կազմակերպահիրավական հիմքերը, նպատակները, խնդիրները, սկզբունքներն ու գործառույթները, ինչպես նաև ծառայողների իրավական կարգավիճակին վերաբերող և մի շարք այլ հարցեր: Նշվածներից ելնելով, առաջ են քաշվում հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել ոստիկանությունում ծառայության տեղն ու դերը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության համակարգում, ինչպես նաև ոստիկանական գործունեությունը դիտարկել որպես պետության ներքին անվտանգության ապահովմանն ուղղված իրավապահ գործունեության տարատեսակ,
- վերլուծել ոստիկանությունում ծառայության, որպես պետական ծառայության առանձնահատուկ տեսակի, կառուցակարգային բնույթը,
- բացահայտել ոստիկանությունում ծառայության մասին օրենսդրությունում առկա և այս ոլորտում ծառայողական հարաբերությունների կարգավորման ընթացքում հիմնախնդիրներ ծնող առկա բացերն ու հակասությունները: Համեմատական վերլուծություններ կատարելով ինչպես պետական ծառայության այլ տեսակների իրավական կարգավորման ընթացքում դրսևորվող մոտեցումների, այնպես էլ արտասահմանյան երկրներում գործող օրենսդրության հետ, առաջարկություններ ներկայացնել խնդրո առարկան կարգավորող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,
- առաջարկություններ անել ոստիկանությունում ծառայության կազմակերպահիրավական համակարգի կառուցվածքային տարրերի կատարելագործման վերաբերյալ:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները և տեսական բազան:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են հանդիսացել գիտականորեն հիմնավորված և գործնականում կիրառվող գիտական մեթոդները՝ ինչպես ընդհանուր (դիալեկտիկական և համակարգային), այնպես էլ մասնավոր (տրամաբանական, համեմատական-իրավական և համակարգակառուցվածքային, պատմահիրավական և այլն): Կիրառելով նշված մեթոդները և հենվելով իրավական աղբյուրների հնարավորին ամբողջական համակցության վրա է հնարավոր առաջադրված խնդիրների լուծումը:

Ատենախոսության համար որպես տեսական բազա են ծառայել սահմանադրական, վարչական, միջազգային, քրեական, քաղաքացիական և իրավունքի այլ ճյուղերի, ինչպես նաև իրավաբանական գիտության այլ բնագավառների մասնագիտական գրականությունը: Այն հիմնված է գիտական աղբյուրների՝ մենագրությունների, հոդվածների, գիտական և գործնական այլ աշխատանքների, նյութերի ուսումնասիրման վրա: Աշխատության մեջ արծածված հարցերով ուսումնասիրվել և հաշվի են առնվել ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա գիտնականների աշխատությունները: Հայրենական գիտնականներից, հատկապես, կարևոր են Ն.Այվազյանի, Գ.Դանիելյանի, Գ.-

Դավթյանի, Ռ.Եղյանի, Ա.Խուդավերդյանի և Գ.Հարությունյանի աշխատանքները:

Օտարերկրյա իրավագետներից օգտագործվել են Գ.Ատամանչուկի, Դ.-Բախրախի, Կ.Բելսկու, Է.Բիթթների, Բ.Գաբրիչիձեի, Վ.Դանիլովի, Գ.Դուբովայի, Ի.Զուբովայի, Դ.Իզմաիլովի, Բ.Լազարևի, Վ.Կուբիշկոյի, Վ.Մանոխինի, Ա.Գ.Չեռնյավսկու, Ա.Պոզդնիշովի, Վ.Սալնիկովի, Յու.Ստարիլովի, Ս.Ստեպաշինի, Կ.Քլոքարսկի, Ա.Օսեի, Վ.Ֆոկինի և այլոց աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ-իրավական հիմքն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրությունը, դրանում 2005 թվականի նոյեմբերի 27-ին կատարված փոփոխություններով, օրենքները («Հանրային ծառայության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Ոստիկանության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին», «Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին» ՀՀ օրենքները, պետական ծառայության առանձին տեսակներին նվիրված ՀՀ այլ օրենքներ): Օգտագործվել են ատենախոսության թեմայի վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերը՝ Հանրապետության Նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության որոշումները, գերատեսչական ակտերը ¥կանոնադրություններն ու կանոնագրքերը, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետի հրամանները և այլն): Ուսումնասիրվել են նաև սույն աշխատությանը վերաբերող կարևորագույն միջազգային իրավական փաստաթղթերը (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին» և «Պետական ծառայության բնագավառում աշխատանքային հարաբերությունների մասին» Ժնևի կոնվեցիաները, «Եվրոպայում հանրային ծառայողների կարգավիճակի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականը, «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի որոշումը, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային պակտը, «Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագիրքը», «Ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում փոխհամագործակցության մասին» պայմանագիրը և այլն):

Բացի այդ, աշխատանքում համեմատական վերլուծությունների են ենթարկվել Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Ճապոնիայում, ԱՊՀ մի շարք և այլ երկրներում ոստիկանությունում ծառայության կազմակերպաիրավական հիմքերը, գործունեության այդ առանձնահատուկ տեսակը կարգավորող օրենսդրությունը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են՝

1) կատարված վերլուծությունները հանգեցրել են այն կարծիքին, որ հանրային ծառայության հասկացության օրենսդրական բնորոշումը թերի է և չի բխում տվյալ հիմնախնդրի վերաբերյալ ձևավորված տեսական պատկերա-

ցումներից և իրավական տրամաբանությունից: Այն միավորում է տարասեռ հասկացություններ, որն անթույլատրելի է: Առկա բացը վերացնելու համար նպատակահարմար է հանրային ծառայությունն օրենսդրորեն բնորոշել որպես մասնագիտական գործունեություն, որն ուղղված է պետությանը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացմանը և ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, ինչպես նաև պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց ծառայությունը,

2) ներկայումս ոստիկանությունում ծառայության օրենսդրորեն ամրագրված սկզբունքները հիմնականում ընդհանուր են ողջ հանրային ծառայության համար և չեն արտացոլում ոստիկանությունում ծառայության առանձնահատկությունները: Ոստիկանության ծառայության սկզբունքների բացահայտման և հիմնավորման գործընթացը պետք է արտացոլի պետական ծառայության այս տեսակի ոչ թե ցանկացած, այլ՝ առավել էական, գլխավոր, կայուն, օբյեկտիվորեն անհրաժեշտ օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը: Դրանք պետք է արտացոլեն ոստիկանության ծառայության յուրահատկությունը, դրա տարբերությունը պետական այլ ծառայություններից,

3) պետական ծառայության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության ինստիտուտի ներդրման գործընթացն իրականացվում է հատուկ ծառայություններում քաղաքացիական հատուկ ծառայության վերաբերյալ իրավական ակտերի ընդունման կամ ծառայության տվյալ տեսակին նվիրված օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով: Կարծում ենք, որ կիրառվող մոտեցումն արդարացված չէ և առավել է խորացնում ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորման ընթացքում անհարկի առաջացած խառնաշփոթ վիճակը: Առաջարկում ենք, ոչ միայն ոստիկանությունում, այլև հատուկ ծառայություն իրականացնող մյուս մարմինների այն ստորաբաժանումներում, որոնց գործունեությունն անմիջականորեն ուղղված չէ պետական մարմնի խնդիրների լուծմանը, ծառայությունը դիտարկել որպես քաղաքացիական ծառայություն: Դրա համար անհրաժեշտ է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում, որը նվիրված է օրենքի գործողության ոլորտին, պետական այլ մարմինների շարքում նշված ստորաբաժանումները ևս ավելացնել,

4) հանրային, պետական և ոստիկանությունում ծառայողական հարաբերությունների կարգավորման ընթացքում հստակություն մտցնելու նպատակով անհրաժեշտ է մշակել և օրենսդրորեն ամրագրել այն հատկանիշները, որոնք թույլ կտան գիտականորեն հիմնավորված կերպով պնդել, որ ոստիկանության բոլոր ծառայողները հանրային ծառայողներ են: Խոսքը վերաբերում է ոստիկանության ուսումնական հաստատություններում պետական պատվերի շրջանակներում սովորող, ինչպես նաև ՀՀ կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություն ՀՀ ոստիկանության կողմից գործուղված առ-

կա ուսուցման ձևով սովորող քաղաքացիներին, ովքեր ևս «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն հանդիսանում են ոստիկանության ծառայողներ: Չնայած դրան, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանվում է, որ հանրային ծառայողը միայն պետական և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի) զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանրային ծառայության համապատասխան կադրերի ռեզերվում գտնվող անձն է: Նման իրավակարգավորման պայմաններում նշված քաղաքացիները՝ հանդիսանալով ոստիկանության ծառայող, անհասկանալիորեն չեն համարվում հանրային ծառայող: Այդպիսին վիճակն արդարացված չէ ո՛չ տեսական, և ո՛չ էլ գործնական առումով: Առկա հիմնախնդիրը կարող է լուծվել հանրային ծառայողի հասկացությունն ամրագրելիս դրանում այդ խմբի պետական ծառայողներին ևս ընդգրկելու ճանապարհով,

5) ոստիկանության ինչպես նաև պաշտպանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների, փրկարար ծառայության, ինչպես նաև քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայողների լիազորությունների ավելի արհեստավարժ կատարման, ինչպես նաև պետության ֆինանսական միջոցների խնայման նպատակով առաջարկում ենք զինվորական երկարատև ծառայության կենսաթոշակի իրավունք տալ նշված մարմիններում ծառայած և ծառայությունից ազատված այն անձանց, ովքեր ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունեն առնվազն ոչ թե 20, այլ 25 օրացույցային տարվա ծառայության ստաժ: Նույն նպատակով անհրաժեշտ ենք համարում նաև բարձրացնել ոստիկանությունում ծառայության տարիքային սահմանափակումը՝ կրտսեր, միջին և ավագ խմբերի պաշտոնների համար որպես այդպիսին սահմանելով 60 տարեկանը, իսկ գլխավոր խմբի պաշտոնների համար տարիքային սահմանափակում 62 տարեկանը թողնել անփոփոխ,

6) հաշվի առնելով այն, որ ոստիկանության ծառայողների գործառույթների բնույթով պայմանավորված իրավունքների և պարտականությունների ամրագրման ընթացքում գործ ունենք ոչ թե առանձին-առանձին վերցրած իրավունքների կամ պարտականությունների, այլ նրանց միաժամանակ և՛ հնարավոր, և՛ պարտադիր վարքագծի հետ, կարծում ենք, որ օրենսդիրը ոստիկանության ծառայողների կարգավիճակն ամրագրելիս անտեսել է դա և վերջիններիս բոլոր իրավունքներն ու պարտականությունները դիտարկել է միևնույն հարթության վրա: Առաջարկում ենք, ոստիկանության ծառայողների գործունեության բնույթով պայմանավորված իրավունքներն ու պարտականություններն ամրագրելիս գործածել «լիազորություն», իսկ դրանցով չպայմանավորվածների դեպքում «իրավունք» եզրույթը,

7) աշխատանքում անհրաժեշտության և դրա սահմանների իրավաչափության տեսանկյունից վերլուծելով ոստիկանության ծառայողների և ծառայության ապաքաղաքականացվածության, ինչպես նաև հնարավոր հասարակական գործընթացների նկատմամբ չեզոքության ապահովման հիմնախնդիրը, առաջարկում ենք պետական բոլոր հատուկ ծառայողների համար օրենքով սահմանել, որ վերջիններս իրավունք չունեն լինել միայն որևէ կուսակցության անդամ, իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, դրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել,

8) առաջարկում ենք օրենսդրական փոփոխություն կատարելու միջոցով ոստիկանության ծառայողների խրախուսանքի հիմքերի շարքից հանել տևական ժամանակով ծառայության մեջ գտնվելու հիմքը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տևական ժամանակով ծառայության մեջ գտնվելը բխում է ծառայության, որպես սոցիալական երևույթի, ունեցած տևական բնույթից, և նրանից, որ այդ հիմքը չի առաջանում ծառայության ընթացքում ծառայողի գործադրած ջանքերի արդյունքում: Առաջարկն ավելի հիմնավոր է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ տևական ժամանակով ծառայության մեջ գտնվելու հանգամանքի հետ, առանց այդ էլ, ուղղակի կամ անուղղակի կապվում են ծառայողի վարչաիրավական կարգավիճակի փոփոխություններ: Նշված հանգամանքը, կարծում ենք, ինքնին բավարար է ոստիկանության ծառայողների մոտ տևական ժամանակով ծառայության մեջ գտնվելու շարժառիթի ձևավորման համար:

Ուսումնասիրության գիտական և գործնական նշանակությունը

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ոստիկանությունում ծառայության վերաբերյալ օրենսդրության կատարելագործման, ծառայողական իրավունքի և պետական ծառայության տեսակների ոլորտներին առնչվող դասընթացների ուսումնասիրության ընթացքում, ինչպես նաև պետության ներքին անվտանգության ապահովմանն ուղղված իրավապահ գործունություն իրականացնող մարմինների ու կազմակերպությունների կողմից:

Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում, որտեղ անցկացվել է դրա քննարկումը և գրախոսությունը: Սույն ատենախոսության առավել կարևոր դրույթներն արտացոլվել են հեղինակի գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից առաջինը՝ երկու, երկրորդը՝ երեք և երրորդը երկու՝ պարագրաֆներով, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված մասնագիտական գրա-

կանության և նորմատիվ իրավական աղբյուրների ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում են հետազոտության թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, ներկայացվում են ուսումնասիրության օբյեկտը, նպատակը, խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը, տեսական և նորմատիվ իրավական հիմքերը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ուսումնասիրության գիտական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Ոստիկանությունում ծառայությունը որպես իրավական ինստիտուտ» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից, որոնք վերաբերում են հանրային ծառայության տեսական–իրավական բնութագրին, ոստիկանությունում ծառայության իրավական կարգավորմանը և սկզբունքներին:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Հանրային ծառայության տեսական-իրավական բնութագիրը» վերտառությամբ, քննարկվում են հանրային ծառայության և նրա բաղադրատարրերի վերաբերյալ հանդիպող հիմնական տեսական մոտեցումները: Դրանց համատեքստում քննադատվում է այս հասկացության ՀՀ օրենսդրությամբ տրված պարզաբանումը: Նշվում է, որ այն չի կարող ներառել «պաշտոն» հասկացությունը և առաջարկվում է նրանում ընդգրկել պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, ինչպես նաև պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց ծառայությունը:

Անդրադարձ է կատարվում ոստիկանության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության ինստիտուտի ներդրմանը: Այն համեմատվում է պետական ծառայության այլ հատուկ տեսակների համակարգերում ներդրված քաղաքացիական հատուկ ծառայության ինստիտուտների հետ: Նշվում է, որ օրենսդիրը միանման մոտեցում է ցուցաբերել նրանց հիմնական սկզբունքների ամրագրման, պաշտոնների դասակարգման, դասային աստիճանների սահմանման, պաշտոնի նշանակման, ատեստավորման, վերապատրաստման, կադրերի ռեզերվի, ծառայողների իրավական վիճակի, ծառայության կազմակերպան և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերությունները կարգավորելիս: Պետական հատուկ ծառայությունների համակարգերում քաղաքցիական հատուկ ծառայությունների խնդիրներն ու դրանց իրականացման պայմաններում առկա առանձնահատկությունները բավարար չեն դրանց որպես ծառայության առանձին տեսակների ներկայացման, առավել ևս դրանց առանձին իրավական կարգավորման համար: Առաջարկվում է պետական հատուկ ծառայությունների այն ստորաբաժանումներում իրականացվող մասնագիտական գործունեությունը, որը անմիջականորեն ուղղված չէ ծառայության տվյալ տեսակի առջև դրված խնդիրների իրակա-

նացմանը ուղղակի սահմանել որպես քաղաքացիական ծառայություն:

Այս գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Ոստիկանությունում ծառայության իրավական կարգավորումը և սկզբունքները» վերտառությամբ, ներկայացվում է ոստիկանությունում ծառայողական հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի աստիճանակարգը: Նշվում է, որ դրանց թվում առանձնահատուկ տեղ ունեն օրենքները: դրանք դասակարգվում են երեք խմբի՝ օրենքներ, որոնցով ոստիկանությունում ծառայությանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են ծառայողական հարաբերությունների հետ չառնչվող այլ հարաբերությունների կարգավորման շրջանակներում, ոստիկանության իրավասությունների շրջանակում իրականացվող այս կամ այն գործունեության ընթացքում առաջացող հարաբերությունները կարգավորող օրենքներ և օրենքներ, որոնք անմիջականորեն ուղղված են ոստիկանությունում ծառայողական հարաբերությունների կարգավորմանը:

Քննադատության է ենթարկվում պետական ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորման ընթացքում օրենսդրի ցուցաբերած տարաբնույթ մոտեցումը: Նշվում է, որ այն դրսևորվել է ոչ միայն ձևական, այլև բովանդակային առումով: Պետական ծառայողական հարաբերությունները համակարգված կարգավորելու համար առաջարկվում է պետական ծառայության յուրաքանչյուր տեսակի համար առանձին օրենքի շրջանակներում կարգավորման ենթարկել ինչպես նշված ծառայության տեսակի՝ որպես պետական մարմնի համակարգի կառուցվածքին, գործունեության ուղղություններին, այնպես էլ ծառայության, որպես մասնագիտական գործունեության և ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կամ դրան հասնել ծառայողական օրենսգրքի տեսքով ընդունված կոոդիֆիկացված օրենսդրական ակտի միջոցով:

Նշվում է, որ օրենքով ամրագրված ոստիկանությունում ծառայության սկզբունքները հիմնականում ընդհանուր են հանրային ծառայության ողջ ոլորտի համար և արդեն իսկ ամրագրված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով: Ոստիկանությունում ծառայության սկզբունքերի բացահայտման հիմնավորման և իրավական ամրագրման գործընթացը, պետք է արտացոլի ոստիկանությունում ծառայության գլխավոր, առավել բնորոշ, օբյեկտիվորեն անհրաժեշտ օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը, բնութագրի դրա կայուն օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը: Բացի այդ այն պետք է ընդգրկի առավելապես ոստիկանությունում ծառայության, որպես ամբողջական սոցիալական երևույթի բնորոշ, այսինքն՝ ընդհանուր, այլ ոչ թե մասնավոր բնույթի օրինաչափությունները, հարաբերություններև և փոխադարձ կապերը, ինչպես նաև արտացոլի ոստիկանությունում ծառայության յուրահատկությունը, տարբերությունը պետական ծառայության մյուս տեսակներից:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Ոստիկանությունում ծառայութ-

յունը որպես պետական ծառայության հատուկ տեսակ» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից: Այն նվիրված է ոստիկանությունում ծառայության և նրա ընթացքի առանձնահատկություններին, ինչպես նաև ոստիկանական՝ որպես ՀՀ ներքին անվտանգության ապահովման իրավապահ գործունեությանը:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Ոստիկանությունում ծառայության առանձնահատկությունները» վերտառությամբ, ներկայացվում են ոստկանությունում ծառայությունը՝ պետական ծառության այլ՝ այդ թվում նաև հատուկ ծառայություններից տարանջատելու հիմքերը: Ոստիկանությունում ծառայության տարբերությունը վերջիններից, նախ, պայմանավորված է դրա իրականացրած խնդիրներով և գործառույթներով, ծառայության առանձնահատուկ պայմանների և մասնագիտական յուրահատկության առկայությամբ: Դա հաշվի առնելով, մանրամասն ներկայացվում է ոստիկանության առջև օրենքով դրված խնդիրներից էությունը: Իր առջև դրված խնդիրները լուծելու համար ոստիկանությունը հատուկ գործառույթներ է իրականացնում մարդու և քաղաքացու անվտանգության ապահովման, նրա իրավունքների և ազատությունների պաշտպանության, հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարի, հասարակական կարգի և անվտանգության, քաղաքացիների և կազմակերպությունների սեփականության, անձնագրային ռեժիմի պահպանման, ինչպես նաև պետական ռեգիստրի և ընտրողների ռեգիստրի վարման և այլ բնագավառներում: Այդ ոլորտներում ոստիկանությունը լիազորված է իրականացնել վարչաիրավական, քրեադատավարական, օպերատիվ-հետախուզական, կազմակերպական և դաստիարակչական բնույթի միջոցառումներ:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում «Ոստիկանական գործունեությունը որպես ՀՀ ներքին անվկանգության ապահովմանն ուղղված իրավապահ գործունեություն» վերտառությամբ, ազգային անվտանգության ապահովված միջավայրը ներկայացվում է որպես պետության ազգային շահերով պայմանավորված ազգային նպատակ, որի պայմաններում բացակայում են իրական արտաքին և ներքին սպառնալիքներն ազգային արժեքների, շահերի և ազգաբնակչության բնականոն կենսագործունեության հանդեպ: Ներքին անվտանգության ապահովման ոլորտում պետության գործունեության կենտրոնական ուղղություններից են օրինականության և իրավակարգի ապահովմանը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, պետական և ոչ պետական կազմակերպությունների, աշխատանքային կոլեկտիվների և հասարակական կազմակերպությունների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը, հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարի ապահովմանն ուղղված խնդիրների լուծումը: Այս և այլ նույնաբնույթ խնդիրների լուծման համար պետությունն իրականացնում է իրավապահ գործունեություն, որի տարատեսակներից է հանդիսանում ոստի-

կանական գործունեությունը: Նշվում է, որ ոստիկանական գործունեությունը իրավապահ գործունեության տեսակ է և բնորոշվում է որպես իրավակարգը պահպանելու եղանակով պետության ներքին անվտանգության ապահովմանն ուղղված պետական գործունեություն: Այն իրականացվում է գործադիր իշխանության շրջանակում գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդներով, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հարկադրանքի անմիջական կիրառմամբ:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Ծառայության ընթացքի առանձնահատկությունները ՀՀ ոստիկանությունում» վերտառությամբ, նշվում է, որ ոստիկանությունում ծառայության ընթացքի տակ անհարժեշտ է հասկանալ ոստիկանության ծառայողի և ոստիկանության միջև ծառայողական իրավահարաբերություններ առաջացնող, փոփոխող և դադարեցնող իրավաբանական նշանակալի փաստերի ամբողջությունը: Ներկայացվում են ոստիկանությունում ծառայության ընթացքի իրավական կարգավորման ընթացքում տեղ գտած որոշ հիմնախնդիրներ, որոնք վերաբերում են ծառայության անցնելու համար օրենքով ներկայացվող տարիքային ցենզին, ծառայության մեջ գտնվելու առավելագույն տարիքային սահմանափմանը, ծառայության դադարեցման հիմքերին և ուղիներ են առաջարկվում դրանց հաղթահարման համար: Որպես եզրահանգում նշվում է, որ ոստիկանությունում ծառայության ընթացքում առաջացող հարաբերությունների իրավական կարգավորմամբ ներկայումս, ընդհանուր առմամբ, ապահովվում է այս ոլորտում հանրային ծառայության հիմնական սկզբունքների իրացումը: Միևնույն ժամանակ, վկայակոչված հիմնախնդիրների հաղթահարման համար ներկայացված առաջարկների քննարկումը և գործնական կիրառումը ավելի արդյունավետ կդարձնի այս ոլորտում առաջացող ծառայողական հարաբերությունների կարգավորումը:

Երրորդ գլուխը «Ոստիկանությունում ծառայողի իրավական վիճակը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից, որոնք նվիրված են ոստիկանության ծառայողների իրավունքներին, պարտականություններին, սահմանափակումներին. Ինչպես նաև վերջիններիս խրախուսման և պատասխանատվության առանձնահատկություններին:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում «Ոստիկանության ծառայողների իրավունքները, պարտականությունները և սահմանափակումները» վերտառությամբ, նշվում է, որ ոստիկանության ծառայողի կարգավիճակնէական ազդեցություն է թողնում վերջինիս ընդհանուր քաղաքացիաիրավական կարգավիճակի վրա: Այն յուրաքանչյուր ծառայողի համար ամբողջական տեսք է ստանում կախված վերջինիս զբաղեցրած պաշտոնից, ունեցած հատուկ կոչումից և պայմանավորված է նաև այնպիսի հանգամանքներով, որոնցում ծառայողն իրականացնում է իր լիազորությունները: Ոստիկանության ծառայողների կարգավիճակը վերջիններիս իրավունքների, պարտականություն-

ների, ինչպես նաև սահմանափակումների, արգելքների, գործունեությանև պատասխանատվության կանոնակարգերի ամբողջությունն է: Դրանք կարելի է դասակարգել ըստ ընդհանրության աստիճանի և ըստ ոստիկանության ծառայողների գործունեությամբ պայմանավորված լինելու կամ չլինելու հիմքով:

Պարագրաֆում առաջ քաշվում և քննարկվում է ոստիկանության ծառայողների կարգավիճակն ամրագրող իրավական ակտերում ոստիկանության ծառայողների «իրավունք» և «պարտականություն» եզրույթների կիրառման իրավաչափության հիմնախնդիրը: Քննադատվում է ոստիկանության ծառայողների գործառույթների բնույթով պայմանավորված իրավունքների և պարտականությունների ամրագրման ընթացքում նշված եզրույթների գործածումը: Առաջարվում է վերջիններիս գործունեության բնույթով պայմանավորված իրավունքներն ու պարտականություններն ամրագրելիս գործածել «լիազորություն», իսկ դրանցով չպայմանավորվածների դեպքում՝ «իրավունք» եզրույթը: Նշվում է, որ ոստիկանության ծառայողի իրավական կարգավիճակն էականորեն պայմանավորված է վերջինիս վարվելակերպն ներկայացվող կանոններով: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ ունեն ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում «Ոստիկանության ծառայողների խրախուսման և պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ, նշվում է, որ պետական ծառայողների խրախուսումը և իրավական պատասխանատվությունն իրենցից ներկայացնում են իրավասու սուբյեկտների (պաշտոնատար անձի, մարմնի) ներգործությունը պետական ծառայողների հետաքրքրությունների, ձգտումների, գիտակցության, կամքի և այդ կերպ նաև նրանց կողմից իրականացվող մասնագիտական գործունեության վրա: Դրանք պետք է իրականացվեն այնպես, որ նպաստեն ծառայության խնդիրների արդյունավետ լուծմանը: Այդ նպատակով ծառայողներին խրախուսելը կամ պատասխանատվության ենթարկելը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, լինի ժամանակին և նպատակին:

Քննարկվում է ոստիկանության ծառայողների խրախուսանքի հիմքերի թվում, որպես այդպիսին, երկարատև ծառայության հիմքի սահմանման անհրաժեշտություն հիմախնդիրը: Նշվում է, որ պետական ծառայողի տևական ժամանակով ծառայության մեջ գտնվելու հանգամանքը պայմանավորված չէ վերջինիցս, առաջանում է ինքնըստիքյա, բխում է ծառայության՝ որպես սոցիալական երևույթի, տևական բնույթից և առաջարկվում է չնախատեսել այն որպես այդպիսին:

Պետական ծառայողների խրախուսման և պատասխանատվության իրավական ինստիտուտներում որպես թերություն է մատնանշվում այն, որ իրենց առջև դրված խնդիրներով, իրականացման մեթոդներով և պայմաններով նույնաբնույթ ծառայության տեսակների համար սահմանվում են խրախուսման և կարգապահական պատասխանատվության տարբեր հիմքեր և տեսակներ:

Նշվում է, որ դա կհամարվի արդարացի միայն այն դեպքում, երբ պայմանավորված կլինի ծառայության առանձին տեսակների միջև առկա էական նշանակություն ունեցող տարբերություններով և կարտահայտի դրանց յուրահատկությունը:

Եզրակացությունում վերահիմաստավորելով և վերաարժևորելով ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների ընթացքում ոստիկանությունում ծառայության ոլորտում առկա տեսական-իրավական, կամակերպական, հիմնախնդիրների վերհանման, դրանց պատճառների բացահայտման և հաղթահարման համար արդյունավետ միջոցների մշակման ու կիրառման անհրաժեշտությունը այս ոլորտում գոյացած ինչպես տեսական, այնպես էլ գործնական մի շարք հիմնահարցերը կարգավորելու նպատակով կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները.

1) Ոստիկանությունում ծառայությունը հանրային ծառայության անբաժանելի բաղադրատարրն է՝ պետական ծառայության կազմակերպական-իրավական բարդ ինստիտուտը: Անվիճարկելի է, որ այդ, ոլորտում ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորումը պետք է դիտել հանրային ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորման համակարգում: Այդ համատեքստում առանձնակի նշանակություն են ձեռք բերում հանրային ծառայության և այն կազմող տարրերի տեսականորեն հիմնավորված հասկացությունների օրենսդրական ամրագրման հիմնախնդիրը: Աշխատանքում հանրային ծառայության բաղադրամասերի տեսական վերլուծության միջոցով ներկայացվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված այդ հասկացության թերությունները: Դրանց վերացման նպատակով առաջարկում ենք հանրային ծառայությունը բնորոշել որպես **մասնագիտական գործունեություն, որն ուղղված է պետությանը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացմանը, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, ինչպես նաև պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց ծառայությունը,**

2) պետական ծառայության համակարգը կազմող ծառայության առանձին տեսակներն ունեն բավականին ընդհանրություններ, որոնք վերջիններիս միավորում են իրավական միևնույն ինստիտուտի շրջանակում: Միևնույն ժամանակ, ոստիկանությունում ծառայությունը պետական մի շարք ծառայությունների հետ, նախ՝ օժտված է ընդհանուր այնպիսի հատկանիշներով, որոնք թույլ են տալիս վերջիններիս կազմել հատուկ ծառայությունների ենթահամակարգը, ապա նաև ունի բավականաչափ տարբերություններ, որոնցով առանձնանում է դրանց համակարգում: Այդ առանձնահատկություններն, առաջին հերթին, պայմանավորված են ոստիկանության առջև ծառացած խնդիրներով, գործառույթներով և դրանց լուծման ընթացքում կիրառվող մեթոդներով: Բացի այդ, այն պետական ծառայության այլ տեսակներից տարբերվում է ծառայութ-

յան առանձնահատուկ՝ հաճախ նաև կյանքի համար վտանգավոր, ռիսկային պայմաններով, մասնագիտական յուրահատկությամբ, ծառայության կազմակերպման գործընթացում ունեցած հատուկ սկզբունքներով, հատուկ կարգապահական կանոնադրությունների, աշխատակիցների ծառայության պայմաններն ու պաշտոնեական գործառույթների առանձնահատկությունները կանոնակարգող դրույթների առկայությամբ, ինչպես նաև ծառայության ընդունվելու, հատուկ կոչումների շնորհման, պաշտոնական տեղաշարժի, ատեստավորման, վերապատրաստման, պաշտոնից ազատման, ծառայության դադարեցման համար սահմանված առանձնահատուկ կարգով ու պայմաններով, ծառայողների իրավական կարգավիճակով և այլ հանգամանքներով,

3) ոստիկանությունում ծառայությունը՝ որպես իրավական ինստիտուտ, ներկայանում է այդ ծառայության ընթացքում առաջացող հասարակական հարաբերություններ կարգավորող իրավական նորմերի ամբողջության ձևով, որոնք ընդգրկում են իրավունքի տարբեր ճյուղեր:

Պետական ծառայության և պետական մարմինների համակարգի կարգավորմանն ուղղված օրենքների ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ օրենսդիրն այստեղ ևս, ինչպես մի շարք այլ դեպքերում, անհարկի կիրառել է երկակի մոտեցում: Ընդ որում, դա դրսևորվել է ինչպես ձևական, այնպես էլ՝ բովանդակային առումով, որի արդյունքում հանրային ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորման ընթացքում ստեղծվել է խառնաշփոթ վիճակ: Դա վկայում է հանրային ծառայողական հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի մշակման և ընդունման ընթացքում համակարգված մոտեցման բացակայության մասին: Հարաբերությունների կարգավորման ընթացքում տարբեր մոտեցումների կիրառումը բացառելու նպատակով առաջարկում ենք մշակել և ընդունել ծառայողական օրենսգիրք:

4) ոստիկանությունում ծառայության էությունն առավել արտահայտիչ դրսևորվում է նրա սկզբունքներում, որոնք հանդիսանում են ոստիկանությունում ծառայությունը կարգավորող ելակետային, հիմնական և առաջնային դրույթներ: Դրանց վրա է խարսխվում այս բնագավառում ծառայության ողջ իրավական ինստիտուտը:

Ոստիկանությունում ծառայության սկզբունքներն, ըստ ընդհանրության աստիճանի, նպատակահարմար է դասակարգել երկու խմբի: Առաջին խումբն են կազմում այն սկզբունքները, որոնք ընդհանուր են հանրային ծառայության ողջ իրավական ինստիտուտի համար, և դրանով իսկ, հիմնարար նշանակություն ունեն նաև ոստիկանությունում ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորման ընթացքում: Երկրորդ խմբում ոստիկանությունում ծառայության հատուկ սկզբունքներն են: Բացի այդ, ոստիկանությունում ծառայության սկզբունքները կարելի է դասակարգել դրանց՝ ծառայության ընթացքին կամ ոստիկանության գործունեությանը վերաբերելու հիմքով:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքնում հանգել ենք այն եզ-

ռահանգման, որ օրենքով ամրագրված պետական ծառայության այս տեսակի սկզբունքները չեն բխում նրա առանձնահատկություններից և հիմնականում ընդհանուր են ողջ հանրային ծառայության համար: Ոստիկանությունում ծառայության սկզբունքները պետք է արտացոլեն վերջինիս առավել էական, գլխավոր, կայուն, օբյեկտիվորեն անհրաժեշտ ու առավելապես ոստիկանությունում ծառայության, որպես ամբողջական սոցիալական երևույթին բնորոշ օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը: Դրանք պետք է արտացոլեն նաև ոստիկանության ծառայության յուրահատկությունը, դրա տարբերությունը պետական այլ ծառայություններից:

5) Ոստիկանությունում ծառայության ընթացքը տևական, բազմատարր գործընթաց է, որի պարագայում արտահայտվում է ոստիկանության ծառայողի վարչահրավական կարգավիճակը: Վերջինս իրենից ներկայացնում է ոստիկանության ծառայողի և պետական մարմնի (ոստիկանության) միջև ծառայողական իրավահարաբերություններ առաջացնող, փոփոխող և դադարեցնող իրավաբանական նշանակալի փաստերի ամբողջություն: ՀՀ ոստիկանությունում ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորումն ներկայումս, ընդհանուր առմամբ, ապահովում է ոլորտում հանրային ծառայության կայունության, քաղաքացիների համար իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան հանրային ծառայության հավասար մատչելիության, օրենքի առջև հանրային ծառայողների իրավահավասարության, արհեստավարժության, ազնվության, պատասխանատվության զգացումի և մյուս սկզբունքների իրացումը: Աշխատանքում բավականին խորությամբ անդրադարձ է կատարվում ոստիկանության ծառայության ընթացքում առկա հիմնախնդիրների վերհանմանը, դրանց հաղթահարման համար ներկայացվում և քննարկվում են առաջարկներ, որոնց գործնական կիրառումն ավելի արդյունավետ կդարձնի ոստիկանությունում ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորումը:

Մասնավորապես՝ մեր կարծիքով, հիմնախնդիրներ են առկա ոստիկանությունում ծառայության անցնելու օրենքով ամրագրված պայմանների համակարգում: Դրանցից է ոստիկանությունում ծառայության անցնելու համար, ինչպես նվազագույն, այնպես էլ՝ առավելագույն տարիքային ցենզի սահմանման հիմնախնդիրը: Գտնում ենք, որ նպատակահարմար է ոստիկանությունում ծառայության անցնելու համար նվազագույն տարիքային ցենզ սահմանել անձի 18 տարին, իսկ առավելագույնը՝ 35 տարին: Ընդ որում, առանձին մասնագիտություններով, հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, նպատակահարմար է սահմանել ավելի բարձր առավելագույն տարիքային սահմանափակումներ: Բացի այդ, կարծում ենք, որ ոստիկանության համակարգը բանիմաց կադրերով համալրելու խնդրի լուծման համար նպատակահարմար է օրենքով սահմանել, որ ոստիկանությունում ծառայության անցնելու վերը նշված տարիքային սահմանափակումները չեն տարածվում նախկինում

ոստիկանությունում որոշակի ժամկետով (մեր կարծիքով, առավելագույնը 30 տարեկանը ենթադրող մասնագիտությունների համար 7 տարվա, իսկ 42 տարեկանը ենթադրող մասնագիտությունների համար 15 տարվա) ոստիկանությունում ծառայության ստաժ ունեցող քաղաքացիների վրա, ովքեր ոստիկանությունում ծառայությունից ազատվել են օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից անձնական նախաձեռնությամբ գրավոր դիմումի հիման վրա և սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու հիմքերով:

Գտնում ենք, որ արդյունավետ չէ նաև ոստիկանությունում ծառայության տարիքային սահմանափակումների օրենքով նախատեսված կագավորումը: Այն բացասական ազդեցություն է ունենում ոստիկանության ծառայողների լիազորությունների պատշաճ կատարման վրա: Դրա վրա ազդում է նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ առնվազն 20 օրացույցային տարվա ստաժ ունեցող ոստիկանության ծառայողներին երկարատև ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի վերապահումը: Արդյունքում ոստիկանության ծառայողների բավականին ստվար խումբ գործնականում 38-ից-40 տարեկանից ձեռք է բերում երկարատև զինվորական ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունք: Ոստիկանության ծառայողների լիազորությունների ավելի բարեխիղճ կատարման, ինչպես նաև պետության ֆինանսական միջոցների խնայման նպատակով առաջարկում ենք զինվորական երկարատև ծառայության կենսաթոշակի իրավունք տալ ոստիկանությունում ծառայած և ծառայությունից ազատված այն անձանց, որոնք ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունեն առնվազն ոչ թե 20, այլ 25 օրացույցային տարվա ծառայության ստաժ: Բացի այդ, բարձրացնել ոստիկանությունում ծառայության տարիքային սահմանափակումը՝ կրտսեր, միջին և ավագ խմբերի պաշտոնների համար, որպես այդպիսին, սահմանել 60 տարեկանը, իսկ գլխավոր խմբի պաշտոնների համար տարիքային սահմանափակում 62 տարեկանը թողնել անփոփոխ:

6) քննարկելով ոստիկանական գործունեության էությունը և առանձնահատկությունները հանգում ենք հետևության, որ այն իրավակարգը պահպանելու եղանակով պետության ներքին անվտանգության ապահովմանն ուղղված պետական գործունեության տեսակ է: Ոստիկանական գործունեությունը իրականացվում է գործադիր իշխանության շրջանակում գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդներով, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հարկադրանքի անմիջական կիրառմամբ:

7) ոստիկանության ծառայողների կարգավիճակը վերջիններիս իրավունքների, պարտականությունների, ինչպես նաև սահմանափակումների, արգելքների, գործունեության և պատասխանատվության կանոնակարգերի ամբողջությունն է: Անձի մոտ ոստիկանության ծառայողի կարգավիճակն ծագում է ոստիկանությունում ծառայության անցնելով և դադարում է ծառայությունից

ազատվելով: Ծառայողի կարգավիճակն էական ազդեցություն է թողնում անձի ընդհանուր քաղաքացիաիրավական կարգավիճակի վրա: Այն ոստիկանության յուրաքանչյուր ծառայողի համար հստակեցվում և ամբողջական տեսք է ստանում պայմանավորված վերջինիս զբաղեցրած պաշտոնով: Այն պայմանավորված է ծառայողի ունեցած ոստիկանության կոչումով և այն պայմաններով, որոցում վերջինս իրականացնում է իր լիազորությունները:

Ոստիկանության ծառայողների գործունեությամբ պայմանավորված լինելու կամ չլինելու հիմքով իրավունքների և պարտականությունների բաժանման տեսանկյունից վերջիններիս կարգավիճակն ամրագրող իրավական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ առկա է հիմնախնդիր նրանցում ոստիկանության ծառայողների «իրավունք» և «պարտականություն» եզրույթների կիրառման ընթացքում: Խնդիրը նրանում է, որ ոստիկանության ծառայողների՝ իրենց գործառույթների բնույթով պայմանավորված իրավունքների և պարտականությունների ամրագրման ընթացքում գործ ունենք ոչ թե առանձին-առանձին վերցրած իրավունքների կամ պարտականությունների հետ, այլ նրանց միաժամանակ և՛ հնարավոր, և՛ պարտադիր վարքագծի հետ: Կարծում ենք, օրենսդիրը ոստիկանության ծառայողների կարգավիճակն ամրագրելիս անտեսել է վերոգրյալ հանգամանքը և ոստիկանության ծառայողների բոլոր իրավունքներն ու պարտականությունները դիտարկել է միևնույն հարթության վրա: Առաջարկում ենք, ոստիկանության ծառայողների գործունեության բնույթով պայմանավորված իրավունքներն ու պարտակնությունները ամրագրելիս գործածել «լիազորություն», իսկ դրանցով չպայմանավորվածների դեպքում «իրավունք» եզրույթը:

8) քննարկելով ոստիկանության ծառայողներին ներկայացվող որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական, այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ լինելու, իր ծառայողական դիրքը վերջիններս շահերի համար օգտագործելու, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու սահմանափակումը, առաջարկում ենք պետական բոլոր հատուկ ծառայողների համար սահմանել, որ վերջիններս իրավունք չունեն լինեն որևէ կուսակցության անդամ, իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել:

9) աշխատանքում գիտականորեն հիմնավորվում է, որ ոստիկանության համակարգում իրականացվող բարեփոխումների շրջանակում ներդրված քաղաքացիական հատուկ ծառայության ինստիտուտը դրական ազդեցություն կունենա այս բնագավառում ծառայողական հարաբերությունների կարգավոր-

ման և ոստիկանության կողմից իր առջև ծառացած խնդիրների առավել արդյունավետ լուծման գործում:

Քաղաքացիական ծառայության, ՀՀ պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում և ՀՀ ազգային անվտանգության խորհրդում քաղաքացիական հատուկ ծառայությունների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս նշել, որ օրենսդիրը միանման մոտեցում է ցուցաբերել նրանց հիմնական սկզբունքները սահմանելու, պաշտոնների դասակարգման, դասային աստիճանների, պաշտոնի նշանակման, ատեստավորման, վերապատրաստման, կադրերի ռեզերվի, ծառայողների իրավական վիճակի, ծառայության կազմակերպան և ղեկավարման ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերությունները կարգավորելիս: Առկա աննշան տարբերությունները պայմանավորված չեն ծառայության տեսակներով և դրանց իրականացման պայմաններով: Մեր կարծիքով, ոչ միայն ոստիկանության, այլև պետական այլ հատուկ ծառայություն իրականացնող մարմինների առանձին ստորաբաժանումներում իրականացվող մասնագիտական գործունությունը, որն անմիջականորեն ուղղված չէ պետական մարմնի խնդիրների լուծմանը, անհրաժեշտ է սահմանել որպես քաղաքացիական ծառայություն: Դրա հետ նաև անհրաժեշտ է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում, որը նվիրված է օրենքի գործողության ոլորտին, պետական այլ մարմինների շարքում ավելացնել նշված ստորաբաժանումները,

10) էական նշանակություն ունի «ոստիկանության ծառայող» հասկացության տեսականորեն հիմնավորված օրենսդրական ամրագրումը: Վերջինիս գործող իրավական մեկնաբանությունը թերի է: Հանրային, պետական և ոստիկանությունում ծառայողական հարաբերություններում հստակություն կատարելու նպատակով անհրաժեշտ է մշակել և օրենքով ամրագրել այն հատկանիշները, որոնք թույլ կտան գիտականորեն հիմնավորված կերպով պնդել, որ ոստիկանության բոլոր ծառայողներն էլ հանդիսանում են հանրային ծառայողներ: Խոսքը վերաբերում է ոստիկանության ուսումնական հաստատություններում պետական պատվերի շրջանակներում սովորող, ինչպես նաև ՀՀ կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություն ՀՀ ոստիկանության կողմից գործուղված առկա ուսուցման ձևով սովորող քաղաքացիներին: Առկա իրավակարգավորման պայմաններում քաղաքացին կարող է հանդիսանալ ոստիկանության ծառայող, սակայն անհասկանալիորեն չհանդիսանալ հանրային ծառայող: Դա արդարացված չէ ո՛չ տեսական և ո՛չ էլ գործնական առումով,

11) ոստիկանության ծառայողների պարտականությունների բարեխիղճ կատարման ապահովման, դրանով իսկ ոստիկանության խնդիրների արդյունավետ լուծման բարձրացման գործում մեծ է ոստիկանության ծառայողների խրախուսման և իրավական պատասխանատվության ինստիտուտների դերն ու նշանակությունը: Դրանք պետք է իրականացվեն այնպես, որ նպաստեն

ծառայության խնդիրների արդյունավետ լուծմանը: Այդ նպատակով ծառայողներին խրախուսելը կամ պատասխանատվության ենթարկելը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, լինի ժամանակին և նպատակին:

Ոստիկանության ծառայողների խրախուսանքի հիմքերի թվում երկարատև ծառայության սահմանման արդարացիության հիմախնդրի քննարկման արդյունքում առաջարկում ենք օրենքով այն չնախատեսել որպես հիմք: Առաջարկը պայմանավորված է նրանով, որ պետական ծառայողի տևական ժամանակով ծառայության մեջ գտնվելու հանգամանքը պայմանավորված չէ վերջինիցս, այն նրա մոտ առաջանում է ինքնըստիքյա և բխում է ծառայության որպես սոցիալական երևույթի տևական բնույթից: Բացի այդ, օրենսդիրը ոստիկանությունում ծառայության մեջ գտնվելու տևական ժամանակահատվածի հետ արդեն իսկ կապում է որոշակի առավելություններ նրանց վարչաիրավական կարգավիճակում, որոնք բավարար են ծառայողների մոտ երկարատև ծառայության ձգտելու շարժառիթի առաջացման համար:

Աշխատությունում ներկայացված ծառայողական հարաբերությունների կարգավորման ընթացքում տեղ գտած կազմակերպական, իրավական հիմնախնդիրների գիտակցումը, դրանց հաղթահարման համար առաջադրվող միջոցների կիրառումն (օրենսդրական ամրագրում և գործնական իրագործում) ավելի արդյունավետ կդարձնի ոստիկանությունում ծառայողական հարաբերությունների կարգավորումը, կվերացնի առկա բացերն ու հակասությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. Ոստիկանությունում ծառայության անցնելու պայմանները Հայաստանի Հանրապետությունում// Արդարադատություն, No 1(16), Երևան 2012, էջեր 9-13:
2. Ոստիկանությունում կադրային կազմի ապահովման կազմակերպաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում// Արդարադատություն, No 3(22), երևան 2013, էջեր 20-25:
3. Ոստիկանությունում ծառայողների պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում// Արդարադատություն, No 2(21), Երևան 2013, 43-53:
4. Նկատառումներ հանրային ծառայության տեսական-իրավական բնորոշման մասին// Օրինականություն No 85, Երևան 2014 , էջեր 44-49:

МАДОЯН ГУРГЕН ГАГИКОВИЧ

ОРГАНИЗАЦИОННО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПОЛИЦЕЙСКОЙ СЛУЖБЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Р Е З Ю М Е

Диссертация посвящена основным организационно-правовым проблемам службы в Полиции Республики Армения. Выявление основных организационных и правовых проблем службы в Полиции, предложение теоретически обоснованных подходов для их преодоления и их практическое использование являются важным предусловием для полиции, способной противостоять вызову времени. С данным условием поставлена основная цель всесторонне анализировать место и значение службы в полиции в системе государственной службы РА, поднять основные проблемы, имеющиеся в течение регулирования служебных отношений, а также предложить пути для их преодоления. Правовому анализу подверглись организационно-правовые основы, цели и проблемы в Полиции РА и иных видах государственной службы, а также принципы и функции, правовой статус служащих и ряд других вопросов.

Исследование вышеизложенных в диссертации вопросов сопровождается комментариями и взглядами видных ученых правоведов. Автор детально анализирует действующую практику Армении, имея в основе международный опыт и практику, научно основанные теоретические подходы, представляет конкретные предложения.

Представлены и обсуждены основные теоретические подходы человека к общественно полезной деятельности и ее компонентов для удовлетворения общественной службы.

Критике подвергается определение этого понятия Законодательством РА.

Предлагается охарактеризовать его как профессиональную деятельность, которая направлена на реализацию конституционных и уставных целей и функций и на государственной службе, общественной работы, а также работы правительственных чиновников и общественных работ.

При представлении особенностей Полицейской службы Автор отмечает, что разница между службой полиции и других государственных услуг, в том числе специальных служб, во-первых, связана с задачами и функциями полиции, и с наличием особенных условий службы и профессиональной особенностью. Учитывая это, для служащих полиции устанавливается специальный административно-правовой статус.

В работе полицейская деятельность анализируется также, как правоохранительная деятельность, направленная на обеспечение внутренней безопасности государства. Указывается, что тип правоохранительной деятельности характеризуется как государственная деятельность, направленная на обеспечение внутренней безопасности государства путем поддерживания правового порядка. Он осуществляется открытыми и скрытыми методами деятельности в рамках исполнительной власти, в случаях и порядке предусмотренных законом - с непосредственным использованием принуждения.

Рассматривая принципы службы в полиции, Автор указывает, что процесс выявления и обоснования принципов полицейской службы должен отражать не любую, а более значимую, главную, стабильную, объективно необходимую закономерность, отношения и взаимные связи. Они должны отражать основные проблемы, возникшие в течение внедрения института специальной гражданской службы в системе полиции. Это можно сравнить с такими же институтами, включенными в иные государственные службы. Предлагается рассмотреть службу органов, осуществляющих специальную службу в тех подразделениях, деятельность которых непосредственно не направлена на разрешение проблем государственного органа, как гражданскую службу.

Представляются некоторые проблемы, найденные в течение правового регулирования процесса службы в полиции, которые относятся к возрастному цензу, представляемому законом для прохождения службы, максимальному возрастному ограничению находящихся на службе, основ приостановления службы и предлагаются пути для их преодоления. Указывается, что регулированием правовых отношений, возникших в течение службы в настоящее время обеспечивается реализация основных принципов общественной службы в данной сфере специальной государственной службы. В то же время, для преодоления проблем, рассмотрение представленных предложений и практическое использование сделает более продуктивным регулирование служебных отношений в данной сфере.

Автором обсуждаются также проблемы закономерности использования выводов “право” и “обязанность” полицейских служащих в правовых актов. Критикуется использование выводов, указанных в течение фиксирования обязанностей и прав, обусловленных характером функций. Предлагается при фиксировании обязанностей и прав, обусловленных характером деятельности последних использовать “уполномочие”, а в случае необусловленных – термин “право”.

Автор упоминает также особенности поощрения и ответственности служащих полиции. Тем временем рассматривается в числе основ поощрения полиции, как таковой вопрос необходимости определения основы долгосрочной службы. Указывается, что обстоятельство нахождения государственного служащего на службе на долгое время не обусловлено последним, возникает само по себе, исходит из длительного характера службы, в качестве социального явления и предлагает не предусматривать его как такового. В правовых институтах поощрения и ответственности государственных служащих, в качестве недостатка указывается то, что проблемами, поставленными перед ними, методами осуществления и условиями для однохарактерных видов служб установлены разные основы и виды дисциплинарной ответсвенности и поощренния. Указывается, что это будет считаться справедливым только в том случае, когда будет обусловлено значитвльной разницей между видами служб и будет выражать их особенность.

Summary

Gurgen Gagik Madoyan

ORGANIZATIONAL AND LEGAL ISSUES OF POLICE SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA

The current research is dedicated to the key organizational and legal issues of police service in the Republic of Armenia. The revelation of the key organizational and legal issues of service in the police, the theoretically well-grounded approaches to overcome them and their practical application are an important precondition for having police forces that are able to resist the challenges of the time. Based on this, the aim of the research is to carry out a comprehensive analysis of the role of the service in police forces in the system of the RA State Service, to reveal the problems apparent in the regulation of service relations as well as to suggest ways to overcome them.

The organization and legal bases, objectives and problems, principles and functions of service in the police and other state services of the Republic of Armenia, as well as the legal status of servicemen and a number of other issues have undergone a legal and comparative analysis in the research.

The investigation of the issues listed above are accompanied by comments and views of eminent specialists in the field of law. The author of the dissertation comes up with a detailed analysis of the current practice applied in Armenia having in mind the international experience and practice, the theoretical approaches already proven scientifically and presents concrete proposals.

The major theoretical approaches to state service as a public-effective activity carried out by people and its key elements have been set forth and considered in the research. The clarification of the notion as offered by the RA legislation has been criticized. The author addresses the issues that emerged when introducing the institute of the special civil service in the police system. It is compared with the same institutes introduced in other state services. It is suggested that the service should be viewed as civil in the departments offering special services which are not directly aimed at solving problems of the state institution.

Considering the principles of service in the police, it is stated that the process of revealing and grounding the principles of police service should reflect the essential, underlying, stable, objectively necessary standards, relations and mutual ties. They should reflect the specificity of the police service and its difference from other public services.

While presenting the peculiarities of police service the author states that first and foremost the difference of the police service from other state as well as special services is conditioned by the functions and problems carried out by the police, as well as by the peculiar service conditions and professional peculiarities. Analyzing the characteristics of police activity, the author concludes that it is a type of law enforcement activity and is

characterized as a state activity to ensure domestic security through maintenance of the legal system. It is carried out in the framework of the executive authorities explicitly or implicitly, in the cases and in the order defined by law by the direct use of compulsion.

The research highlights some of the problems encountered in the process of legal regulation of police service. These refer to age limits, grounds for terminating service set by law. Meanwhile, ways have been proposed to overcome these problems. The conclusion of the research states that the legal regulation of the relations emerging while serving in the police forces ensures the implementation of the key principles of public service in this field of special public service. Meantime, the discussion of the proposals aimed at overcoming the major problems and their application in practice will make the regulation of service relations more effective. The researcher also dwells upon the use of the terms ***right*** and ***obligation*** of servicemen in the legal acts determining the status of the police servicemen. The research offers to use the term ***authority/mandate*** for the rights and obligations conditioned by the type of their activity and the term ***right*** for those which are not conditioned by them. The current research also tackles encouragement and punishment mechanisms of the servicemen.

The author also addresses the peculiarities of promotion and liability of police servicemen. In this regard, while discussing the grounds of promotion of police servicemen, the author puts forward the necessity of defining the grounds for long service. It is stated that the fact that a state serviceman has been in service long is not conditioned by his wish only. It occurs itself and stems from the nature of the service as a social phenomenon. The author proposes not to view it as such. Among the pitfalls in the legal institutes of promotion and liability of state servicemen the author of the research points that various grounds and types of promotion and disciplinary liabilities are defined for services with similar goals, methods of implementation and conditions.

It is stated that it will be just only in case it is conditioned by considerable differences among the types of services and in case it expresses their uniqueness.